Պատմության օլիմպիադայի մարզային փուլ (2023-2024 ուստարի)

9-րդ դասարան (տևողությունը՝ 150 րոպե)

ա) Հայոց պատմություն (15 միավոր)

1. Ե՞րբ է սկսվել բրոնզի դարը Հայաստանում. 0,5 մ.
   ա/ Ք.ա. III հազարամյակի կեսերին բ/ Ք.ա. IV հազարամյակի կեսերին
   գ/ Ք.ա. III հազարամյակի սկզբում դ/ Ք.ա. II հազարամյակի սկզբում
2. Ե՞րբ է կառավարել Երվանդ IV-ը. 0,5 մ.
   ա/ Ք.ա. 220-201 թթ. բ/ Ք.ա. 221-200 թթ.
   գ/ Ք.ա. 230-200 թթ. դ/ Ք.ա. 231-200 թթ.
3. Ո՞ւմ տաճարում են կանգնեցվել Արտաշես I-ի նախնիների արձանները. 0,5 մ.
   ա/ Ապոլոնի բ/ Անահիտի գ/ Արամազդի դ/ Վահագնի
4. Ե՞րբ է ծնվել Տիգրան II Մեծը. 0,5 մ.
   ա/ Ք.ա. 142 թ. բ/ Ք.ա. 135 թ. գ/ Ք.ա. 140 թ. դ/ Ք.ա. 145 թ.
5. Ո՞ր թվականին է մահապատժի ենթարկվել Արտավազդ II-ը. 0,5 մ.
   ա/ Ք.ա. 32 թ. բ/ Ք.ա. 31 թ. գ/ Ք.ա. 30 թ. դ/ Ք.ա. 27 թ.
6. Ե՞րբ է տեղի ունեցել Օսխայի (Ոսխայի) ճակատամարտը. 0,5 մ.
   ա/ 287 թ. բ/ 296 թ. գ/ 297 թ. դ/ 298 թ.
7. Ո՞ր գավառում է կառուցվել Արշակավան քաղաքը. 0,5 մ.
   ա/ Արշարունիք բ/ Ծաղկոտն գ/ Բասեն դ/ Կոգովիտ
8. Քանի՞ մահալի էր բաժանված Երևանի խանությունը XIX դ. սկզբին. 0,5 մ.
   ա/ 10 բ/ 12 գ/ 15 դ/ 17
9. Ե՞րբ է հռչակվել Կարսի (Վանանդի) թագավորությունը: 0,5 մ.
10. Ո՞ր կաթողիկոսն է 885 թ. Աշոտ Բագրատունուն օծել Հայոց թագավոր: 0,5 մ.
11. Ո՞վ է հեղինակել «Աղվանից աշխարհի պատմություն» երկը: 0,5 մ.
12. Ըստ 1836 թ. եկեղեցական կանոնադրության՝ քանի՞ թեմ պետք է ունենար Հայ Առաքելական Եկեղեցին Ռուսաստանում: 0,5 մ.
13. Դասավորե՛ք ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ. 1 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)
   ա/ Կ. Պոլսի ռուս-թուրքական պայմանագրի կնքումը
   բ/ Թուրքական երեք զորամասերի ներխուժումը Վարանդա
   գ/ Դավիթ Բեկի հաղթանակը ջևանշիր ցեղերի դեմ
   դ/ Շուշին գրավելու՝ օսմանյան զորքերի անհաջող փորձը
   ե/ Թիֆլիսի գրավումը օսմանյան բանակի կողմից
   զ/ Երևանի գրավումը օսմանյան բանակի կողմից
   է/ Հալիձորի բերդի առաջին պաշարումը օսմանյան բանակի կողմից
   ը/ Մխիթար սպարապետի սպանությունը
   թ/ Մեղրիի ազատագրումը հայկական ուժերի կողմից

1	2	3	4	5	6	7	8	9

14. Կազմե՛ք համապատասխան զույգեր. 1,5 մ. (6 X 0,25 մ.)
   1. Կամավորական 4-րդ ջոկատ 2. Քաղաքամեջի զինվորական մարմին
   3. Շապին Գարահիսար 4. Ուրֆա
   5. Սուետիա 6. Այգեստան
   ա. Մկրտիչ Յոթնեղբայրյան բ. Քեռի գ. Տիգրան Անդրեասյան
   դ. Ղուկաս Տեովլեթյան ե. Արմենակ Եկարյան զ. Հայկակ Կոսոյան

1	2	3	4	5	6

15. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա/ Ք.ա. 183-176 թթ. Փոքր Ասիայում չորս փոքր պետություններ պատերազմ էին մղում միմյանց դեմ:
բ/ Տրդատ I-ին հաջորդել է Սանատրուկը (88-110 թթ.):
գ/ Հերոդոտոսի տեղեկությունների համաձայն՝ Հայաստանի և Միջագետքի միջև առևտուրը կատարվում էր Տիգրիս գետով:
դ/ 806 թ. Աշոտ Մսակերը ճանաչվել է Հայոց իշխան:
ե/ 1755 թ. Հովսեփ Էմինը, հոր կամքին հակառակ, մեկնում է Անգլիա:
զ/ 1920 թ. մայիսի 10-ին հայ բոլշևիկների ստեղծած Հայաստանի ռազմավարական կոմիտեն հայտարարել է իշխանությունն իր ձեռքը վերցնելու մասին:
է/ 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Կովկասյան ռազմաճակատում հիմնական գործողությունները վարում էր Մ. Լոռիս-Մելիքովի ղեկավարած 52 հազարանոց Կովկասյան կորպուսը:
ը/ 1639 թ. գրավելով Բաղդադը՝ Օսմանյան կայսրությունը հաշտություն է առաջարկել Սեֆյան Պարսկաստանին, և պայմանագիրը կնքվել է Կասրե-Շիրինում:
թ/ Հայ-թաթարական ընդհարումներն ավարտվել են 1906 թ. սեպտեմբերին:

1	2	3

16. Ընտրե՛ք տերմինների 2 ճիշտ բացատրությունները: 1 մ. (2 X 0,5 մ.)

ա/ Գավգամելայի ճակատամարտում Մեծ Հայքի զորքերը ղեկավարում էր հյուպարքոսը:
բ/ Պետական պաշտոնյաներին, զինվորականներին և հոգևորականներին ծառայության դիմաց տրվող հողերը կոչվում էին «պարգևականք»:
գ/ Հայ-վրացական զինակցության ժամանակ հայկական բանակը գլխավորում էր հազարապետը:
դ/ Արքունի քարտուղարության ղեկավարը Կիլիկյան Հայաստանում կոչվում էր մարաջախտ:
ե/ Արևմտյան Հայաստանում XIX դ. սկզբում քաղաքների կառավարիչները կոչվում էին քալանթար:
զ/ Ռազմական կոմունիզմը նախատեսում էր մարդկանց եկամտի և ունեցվածքի ավելցուկի բռնագրավում:
է/ 1915 թ. հայ կամավորական ջոկատների հրամանատարները կոչվում էին սպասալար:
ը/ Մեծ Հայքի Արշակունյաց թագավորության տնտեսական ոլորտը համակարգում էր հազարապետը:

1	2

17. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 սխալ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա/ Հայասան ունեցել է 700 մարտակառքերից և 10-հազարանոց հետևակից բաղկացած բանակ:
բ/ Ք.ա. 776 թ. Արմավիրի հարևանությամբ Արգիշտի I-ը կառուցել է քաղաք, որն իր անունով կոչվել է Արգիշտիխինիլի:
գ/ Արշակունիների շրջանում Մեծ Հայքի թագավորությունը միապետություն էր:
դ/ Հայաստանի ազատագրումը, ըստ Շ. Շահամիրյանի, պետք է կատարվեր օտար լծի դեմ համաժողովրդական ապստամբությամբ:
ե/ Բագրատունյաց Հայաստանում բանակը բաղկացած էր արքունական և մարզպանական գնդերից:
զ/ 1826 թ. սեպտեմբերի 3-ին հայ նշանավոր գեներալ Վ. Մադաթովի 4 հազարանոց զորքը ծանր պարտության է մատնել Աբաս-Միրզայի զորքերին:
է/ Սիմեոն Երևանցին 1776 թ. Ս. Էջմիածնում հիմնել է տպարան, կարճ ժամանակ անց՝ թղթի գործարան:
ը/ 1899 թ. սկսել է գործել Թիֆլիս-Ալեքսանդրապոլ-Կարս, 1901 թ.՝ Ալեքսանդրապոլ-Երևան երկաթուղին:
թ/ 1917 թ. նոյեմբերին ձևավորված Հայկական կորպուսի կոմիսար է նշանակվել Մովսես Սիլիկյանը:

1	2	3

18. Գտե՛ք, նշե՛ք և ուղղե՛ք սխալը. 1 մ. (2 X 0,5 մ.)

1812 թ. Մանուկ բեյի աջակցությամբ Բուդապեշտում կնքվեց հաշտության պայմանագիր Ռուսական և Օսմանյան կայսրությունների միջև:

19. Կարդացե՛ք սկզբնաղբյուրից մեջբերումը և պատասխանե՛ք հարցերին. 1,5 մ. (3 X 0,5 մ.)

Ադրբեջանի Հեղկոմի դեկրետից՝ տարածքային վեճերի մասին (նոյեմբերի, 1920 թ.)

Խորհրդային Ադրբեջանը, ընդառաջ գնալով դաշնակների իշխանության դեմ եղբայրական աշխատավոր հայ ժողովրդի պայքարին, դաշնակներ, ովքեր հոսեցնում և հոսեցրել են մեր լավագույն ընկեր կոմունիստ-

ների անմեղ արյունը, հայտարարում է, որ այսուհետև ոչ մի տարածքային հարց չի կարող երկու դարավոր հարևան ժողովուրդների՝ հայերի ու մուսուլմանների փոխադարձ արյունահեղության պատճառ դառնալ: Զանգեզուրի և Նախիջևանի գավառների տարածքը համարվում է Խորհրդային Հայաստանի անբաժան մասը, իսկ Լեռնային Ղարաբաղի աշխատավոր գյուղացիությանը տրվում է ինքնորոշման լիակատար իրավունք: Զանգեզուրի սահմաններում դադարեցվում են բոլոր ռազմական գործողությունները, իսկ Խորհրդային Ադրբեջանի զորքերը դուրս են բերվում:

ա. Տեքստում հիշատակվող Զանգեզուրի գավառը Ռուսական կայսրության ո՞ր նահանգի կազմում է եղել:
բ. Ո՞ր իրադարձություններն են ակնարկվում «կոմունիստների անմեղ արյան» մասին հիշատակությամբ:
գ. Ո՞վ էր դեկրետը հրապարակած Ադրբեջանի Հեղկոմի նախագահը:

բ) Համաշխարհային պատմություն (5 միավոր)

1. Որքա՞ն հանդիսատես էր տեղավորում Հին Հռոմի խոշորագույն մարզահամալիրը՝ Կոլիզեումը. 0,5 մ.
   ա/ 50 000 բ/ 70 000 գ/ 80 000 դ/ 100 000
2. Ո՞վ է կառուցել առաջին շոգեքարշը. 0,5 մ.
   ա/ Ռիչարդ Արկրայթ բ/ Թոմաս Նյուկոմեն գ/ Ջորջ Ստեֆենսոն դ/ Ջ. Ուատտ
3. Ե՞րբ է ձևավորվել Պելոպոնեսյան միությունը. 0,5 մ.
   ա/ Ք.ա. VII դ. սկիզբ բ/ Ք.ա. VI դ. գ/ Ք.ա. V դ. դ/ Ք.ա. VII դ. վերջ
4. Որտե՞ղ էր գտնվում Ազգերի լիգայի կենտրոնակայանը. 0,5 մ.
   ա/ Նյու Յորք բ/ Փարիզ գ/ Ժնև դ/ Վիեննա
5. Հունական դիցարանում ո՞վ էր ընտանիքի դիցուհին: 0,5 մ.
6. Համապատասխանեցրե՛ք. 1 մ. (4 X 0,25 մ.)
   1. Հաննիբալի բանակի մուտքը Իսպանիայից Իտալիա
   2. Սկիպիոն Աֆրիկացու գլխավորած հռոմեական բանակի հաղթանակը Կարթագենի ճակատամարտում
   3. Մակեդոնական լծից ազատագրելու պատրվակով Հռոմի գերակայության հաստատումը Հունաստանում
   4. Կաննեի ճակատամարտը

   ա. Ք.ա. 196 թ. բ. Ք.ա. 216 թ. գ. Ք.ա. 218 թ. դ. Ք.ա. 202 թ.

1	2	3	4

7. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
   ա/ Եվրոպայում հնագույնը Բոլոնիայի համալսարանն է:
   բ/ Հռոմի եպիսկոպոսական աթոռը հիմնադրել է Հիսուսի սիրելի աշակերտ Պողոս առաքյալը:
   գ/ Պուատիեի մոտ 732 թ. տեղի ունեցած ճակատամարտում Պիպին Կարճահասակը պարտության է մատնել արաբներին:
   դ/ 955 թ. Օտտոն I-ը պարտության է մատնել հունգարներին, որից հետո նա համարվել է Եվրոպայի ամենահզոր տիրակալը:
   ե/ Նովգորոդի իշխան Օլեգը 892 թ. գրավել է Կիևը:
   զ/ Զայրացած ժողովուրդը 1789 թ. օգոստոսի 26-ին գրավել է Բաստիլ ամրոցը:
   է/ Թյուրքալեզու բուլղարները 681 թ. Բալկաններում ստեղծել են Բուլղարական թագավորությունը:
   ը/ 1799 թ. Իրանում հաստատվել է Ղաջարների արքայատոհմը:

1	2	3

Հանրապետական օլիմպիադայի հանձնաժողովի նախագահ՝

ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ, պատմ. գիտ. թեկնածու Մ. Մալխասյան

05.02.2024 թ.